

ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՌՈԲԵՐՏ ՌԱՆՍԻԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի 25-ին Քենթրբերիի Մայր տաճարում տեղի է ունենում Համայն Անգլիայի եպիսկոպոսապետ ու միտրոպոլիտ Նորին Գերաշնորհություն Ռոբերտ Ռանսիի գահակալության հանդիսությունը:

Քենթրբերիի նորընտիր արքեպիսկոպոսը ծնվել է 1921 թվականի հոկտեմբերի 21-ին: Աստվածաբանական իր բարձրագույն կրթությունը նա ստացել է Օքսֆորդում: 1950 թվականին նա ձեռնադրվում է քահանա ու նվիրվում հովվական-քարոզչական գործունեության:

1970 թվականին ստացել է եպիսկոպոսական աստիճան ու նշանակվել Ս. Ալբանսի թեմի առաջնորդ:

1979 թվականին ընտրվել է Քենթրբերիի առաջնորդ՝ հաջորդելով իր տարիքի բերումով հանգստյան կոչված Քենթրբերիի նախկին արքեպիսկոպոս դոկտոր Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանին:

Նորընտիր արքեպիսկոպոս Ռոբերտ Ռանսին համարվում է Սուրբ Օգոստինի աստմական Աթոռի 102-րդ գահակալը:

Քենթրբերիի արքեպիսկոպոսի գահակալությունը տեղի է ունենում ավանդական շուքով և հանդիսությամբ:

Գահակալման արարողությանը մասնակցում են քույր Եկեղեցիների, ինչպես նաև այլ դավանությունների բարձրաստիճան հոգևոր պետեր, կառավարական պատասխանատու անձնավորություններ, դիվանագիտական մարմնի ներկայացուցիչներ:

Հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետի, գահակալությանը ներկա են լինում նաև Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Անգլիայի հայոց հոգևոր առաջնորդ Տ. Ներսես եպս. Պոզապալյանը և, որպես հյուր, Մայր Աթոռի միաբան Տ. Պսակ արքեպ. Թումայանը:

Գահակալական արարողության ժամանակ ընթերցվում է նորընտիր արքեպիսկոպոսի ընտրության պաշտոնական գրություն-մանդատը: Տաճարի շքամուտքի առաջ հոգևորականների դասը ողջունում է նորընտիր արքեպիսկոպոսին և նրան առաջնորդում տաճար, ուր նա Քենթրբերիի պատմական Ավետարանը ձեռքին կատարում է արքեպիսկոպոսական իր ուխտը՝ հավատարիմ մնալու անգլիկան Եկեղեցու դավանությանը, ավանդություններին, կարգ ու կանոնին:

Այնուհետև նորընտիրը եկեղեցական թափորով ու Ս. Գրական ընթերցումների կատարմամբ առաջնորդվում է իր արքեպիսկոպոսական գահը, ուր նրան մատուցվում է հովվապետական գավազանը, և նա պաշտոնապես բազմում է Սուրբ Օգոստինի գահի վրա և ողջունում է բոլոր ներկաներին, տալիս իր առաջին պատգամն ու խաղաղության օրհնության իր ողջույնը:

Այնուհետև բոլոր ներկաները միասին արտասանում են Նիկիական հանգանակը:

Գահակալության հաջորդ օրը Հայ Եկեղեցու պատվիրակությունը պաշտոնապես այցելում է նորընտիր Տ. Ռոբերտ Ռանսի արքեպիսկոպոսին և նրան փոխանցում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի եղբայրական ողջույններն ու հանձնում Նորին Սուրբ Օծության շնորհավորական հետևյալ գիրը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՔԵՆԹԲԵՐԻԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ՆՈՐԻՆ ԳԵՐԱՇՆՈՐՀՈՒԹՅՈՒՆ ՔԵՆԹԸՐՊԸՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՌՈԲԵՐՏ ՌԱՆՍԻԻՆ

Լոնդոն

Եղբայր Մեր ի Քրիստոս,

Աստուծո ողորմությամբ, այս երջանիկ պահին, երբ Ձերդ Գերաշնորհությունը բարձրանում է Քենթբրպբրիի արքեպիսկոպոսության պատմական գահի վրա, ստանձնելու հովվապետությունը Անգլիկան մեծ Եկեղեցու ու համայնքի, Մենք Հայրապետը Հայ Առաքելական Եկեղեցու, ծնկի եկած մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սեղանի առաջ, ջերմապես աղոթում ենք, որ Տերը Ձեզ պարգևի կենաց երկար ու խաղաղ տարիներ, և որ Սուրբ Հոգին պայծառորեն լուսավորի Ձեր առաքելության ճանապարհը, որպեսզի իմաստությամբ, ավետարանական ներշնչումներով ու լավատեսությամբ ղեկավարեք ձեր Եկեղեցին և ձեր ժողովուրդը մեր օրերի աշխարհի այս խռովահույզ ժամանակաշրջանին, երբ մարդկությունը ավելի քան երբեք կարիքն ունի ժողովուրդների միջև փոխադարձ բարի կամեցողության, արդարության և խաղաղության աստվածային պատվիրանների կենսագործման:

Շնորհավորելով Ձերդ Գերաշնորհության ընտրությունը և գահակալությունը, այսօր թույլ տվեք հայտնել Մեր քաղցր իղձը, որ նաև հետ այսու Ձեր հովվապետության շրջանին, շարունակվեն ու հետզհետե առավել ամրապնդվեն ավանդական եղբայրական սիրո և գործակցության հարաբերությունները մեր երկու Եկեղեցիների միջև, ինչ որ հույժ մխիթարական է անձամբ Մեզ և համայն հայ հավատացյալ ժողովրդի համար:

Ձերդ Գերաշնորհություն, ընդունեցեք Մեր եղբայրական սրտագին ողջագուրումը ի Քրիստոս սիրով:

«Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով, զորութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13): Ամեն:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
4 փետրվար 1980 թ.

Այնուհետև Քենթբերիի նորընտիր արքեպիսկոպոսի և Հայ Եկեղեցու պատվիրակության միջև տեղի է ունենում ջերմ զրույց, էկումենիկ ոգով, որի ընթացքում Տ. Ռոբերտ Ռանսին հիշում է իր այցելությունը 1977 թվականին Ամենայն Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին, հայտնելով նաև իր բարի ցանկությունը կրկին անգամ ուխտի գալու Սուրբ Գրական երկիրը՝ Հայաստան, և Հայ Եկեղեցու պատմական ու դարավոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածին: